

14849

891.99

2-18

1913

(99)

արք

Համ. 659  
~~Հ. 118 35~~

ԱՐՐԱՀԱՄ ՇԱՀԻՆՆԱՆՑ

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

2003

Թ Ի Ֆ Լ Ի Ս  
Տպարան «ԷՍՊՆԵՐԱՆՏՕ»  
1913

891.99  
C-18

25

|| Արմ. ||  
|| 2-4900a 2-4900a

Am. 653

891.99  
C-18 Ս.ԲՐՈՂԱՄ ԾԱԶԻՆԵԱՆՅՑ

# ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ



Հ. 53020  
ՊՈՒՅՑ. № 22494

Թ Ի Ֆ Լ Ի Ս  
Տպարան «ԷՍՊԵՐԱՆՏՕ»  
1913

45062-ահ



29336-62

## ՈՒՆԱՅՆ ԱՇԽԱՐՀ

Ունայն աշխարհ լացի տուն ես  
Քեզանից ում գանգատ անեմ.  
Կեանքով առողջ մի մարդ չունիս  
Քեզանից ում գանգատ անեմ...

Եկողին առողջ գրկեցիր,  
Ինչ որ ուզեց պարգևեցիր  
Բայց ինչ արած յես գրկեցիր  
Քեզանից ում գանգատ անեմ...

Քո մէջ ժպտերես մտնողին  
Մէծ կարողութիւն գտնողին  
Զրկում ես դառն աշխատողին  
Քեզանից ում գանգատ անեմ...

Շատին տւիր հարստութիւն  
Շատին էլ՝ փայլեք բարձր անուն՝  
Վերջը թողիւր արքատ. անտուն  
Քեզանից ում գանգատ անեմ...

Դուռդ անփակ թողել ես բաց,  
Ով եկաւ հինգ օր չբնաց,  
Մաքուր եկաւ աղտոտ գնաց,  
Քեզանից ում գանգատ անեմ...

Շահինեանցս լուր եմ ասում,  
 Շատերին անդուր եմ ասում,  
 Չկարծես թէ զուր եմ ասում,  
 Քեզանից ում գանգատ անեմ...



### Մ Ի Լ Ա Ր

Մի լար, մի լար, մի նեղանար ով այրի  
 Մենակ դու չես կան հազարներ քեզ նման  
 Կգայ մի օր, որ ատելին կտիրուի  
 Մենակ դու չես, կան հազարներ քեզ նման:

Այս կեանքումը երջանկութիւն ով ունի  
 Քո դրացիդ արտասուքի ծով ունի.  
 Ում լաւ գիտես քեզանից շատ ցաւ ունի,  
 Մենակ դու չես, կան հազարներ քեզ նման:

Բազում ոսկին գանձը մարդու չ'մնաց  
 Իւր հետ ինչ տարաւ մերկ եկաւ գնաց.  
 Այս աշխարհի կէսը խնդում կէսը լաց  
 Մենակ դու չես, կան հազարներ քեզ նման:

Մի լար, մի լար փնաս է քո աշերիդ  
 Վերջը մի բուռ հող ես, ոչ թէ մարգարիտ,  
 Շահինեանցս քեզ եմ ասում ճշմարիտ  
 Մենակ դու չես, կան հազարներ քեզ նման:



Այս դատարի աշխարհիս յոյս դնելու չէ.  
 Միտքս այս կեանքիցը հեռացաւ գնաց  
 Նեղութիւն կրելով մէջքըս էլ ծուեց,  
 Արիւնս ցամաքեց, ապարդիւն գնաց,

Սողոմոնն աշխարհումս ի՞նչ արաւ  
 Ոսկի, արծաթ ինչք հաւաքեց ի՞նչ արաւ.  
 Գիտէք արդեօք այս կեանքիցը ի՞նչ տարաւ  
 Թի հինգ չափ կտաւի տիրացաւ, գնաց:

Շահինեանցս փորձ եմ արել շատերից  
 Հասարակ յուլունքը երբ կլինի մարգարիտ,  
 Այս կեանքումը մարդ չ'գտայ ճշմարիտ,  
 Ում լաւութիւն արի, ուրացաւ գնաց:



«Այժեամի եղանակով»

Աշխարհումս ով մնաց, որ ես էլ մնամ,  
 Թէ խելօք, թէ քաջ մերկ եկաւ գնաց.  
 Թի՛նչև իսկ փառքի տէր, անուանի մարդիկ  
 Ամենագիտունն էլ մերկ եկաւ, գնաց:

Մարդ կարող է գտնել կեանք կարողութիւն,  
 Հասկանալով՝ տալով տուրս ողորմութիւն.  
 Չըկուրանալ՝ պահել մեծ հարստութիւն  
 Չէ Հարուն-Ղարունն էլ մերկ եկաւ գնաց:

Անուշ օրերս անցան մէկ հիւրի նման,  
 Ապերախտի կայքը մէկ փարի նման.

Շահինեանցիս մեղքը մէկ սարի նման  
Ազամն էլ գրախտին մերկ եկաւ, գնաց:



\*  
\*\*

Թէ կարող ես մարդու լաւութիւն արա՛,  
Վատութիւն անելը մի բան չի շինում.  
Աշխատեցէք շարի պատճառ չլինէք,  
Անտեղի խօսելը մի բան չի շինում:

Միթէ եկանք աշխարհումս մնալու,  
Ինչո՞ւ էք աշխատում շատ ունենալու.  
Ո՛ւր են մեր պապերը, յետ չեն դառնալու  
Կորուստը սգալը մի բան չի շինում,

Հարկաւոր է ազնիւ հոգի ունենալ,  
Ծուռը ճանապարհով երբէք չըզնալ.  
Ինչ մարդ մօր կաթիցը չի լինում հալալ,  
Հազար խրատ տալը մի բան չի շինում...



\*  
\*\*

Մէկ մարդ, որ իւր տանը ապրուստ չունենայ՝  
Իրացուն խնդալը ի՞նչ հարկաւոր ա.  
Մէկ մարդ, որ մէկ մարդու տունը չկանչէ  
Ինքն իրեն գնալը ի՞նչ հարկաւոր ա:

Քաղցր բանը բնաւ դառը չի լինիլ  
Մասրքին լիմօնի ծառը չի լինիլ.  
Գիլի ճուտը պահես գառը չի լինիլ,  
է, դէ պահելն էլ ի՞նչ հարկաւոր ա:

Ձուր է ընկերանալ ուրացողի հետ,  
Վատ անունը հաւասար է հողի հետ.  
Կեղծաւորի, արբեցողի, գողի հետ  
Նստիլ վեր կենալը ի՞նչ հարկաւոր ա:

Ձար զաւակը ծնողին չի համբերում  
Հայրը նրա յանցանքները չի ներում.  
Երբ որ մէկ ծառ բարի պտուղ չի բերում,  
Արմատը ջրելը ի՞նչ հարկաւոր ա:

Շահինեանց երգ է, ամեն տեղ կասեն,  
Խօսքդ մի սխալւիր, ամեն տեղ կասեն.  
Մարդու բարի անունն ամեն տեղ կասեն  
Ինքն իրեն գովելը ի՞նչ հարկաւոր ա:



## Ա Ղ Ի Է Ս


Բունդ բերիւր մեր մարագը չար աղէս,  
Ճանաչում եմ—ի՞նչ զաւակ ես, կամ ո՞վ ես.  
Ինձանից դժւար թէ դու օգուտ տանես  
Ձեռքդ բան չի ընկնիլ անձդ կզոհես:

Ճուտերովդ ման ես գալիս միասին  
Աչք ես դրել մեր հաւերի վնասին.

Ձուր է մտածմունքդ դու լաւ հասկացիր,  
Յիմար ես, չգիտես ի՞նչ կայ քո մասին:

Քանի կենդանի ես հեռու ման արի,  
Քո խարդախ մտքերը ոչ ոք չի ների  
Գիտես գիւղերումը թշնամի ունիս  
Օրական ջնջում են քեզ պէս հազարի:

Մտածում ես՝ «հաւի նման որս ունիմ»  
Բայց չգիտես ի՞նչ նպատակ ես ունիմ:  
Շահինեանցս իբրև գաղանիք քեզ ասեմ,  
Շուտով մորթէ վաճառելու յոյս ունիմ:



### Բ Ա Յ Ի Ի Ր

Բացւիր, բացւիր աղօթարան,  
Բացւիր արև փայլատու,  
Բացւիր գարնան վարդ մանուշակ  
Մեր սրտերն էլ թարմանան:

Որքան տարի անցկացրի  
Ձտեսայ մի վառ ճրագ  
Որ մեզ յոյս տար գիշեր, ցերեկ  
Ինչպէս արև, լուսնեակ:

Մնացի մի մութ սենեակում,  
Ձունի դուռ ու լուսամուտ  
Ոչ արեգակ, ոչ լուսնեակ,  
Աստղերն էլ են անգուլթ...

Երանի ձեզ արև, լուսին  
Երկնքումը փայլում էք,  
Երանի ձեզ բարձր սարեր  
Աշխարհումը անմահ էք:

Երանի է թռչուններին  
Որ ճախրում են պարզ օդում,  
Երանի է ծաղիկներին  
Ձարդարւած են պարտիզում:

Ոչ թռչունի պէս ազատ եմ,  
Ոչ սարի պէս անմահ եմ.  
Շահինեանցս դառն աշխարհից  
Մի օր գնացած կլինեմ...



### Ա Ր Ե Ի

Արև դու աշխարհիս փայլատու զարդն ես  
Առանց քեզ չի լինում տաք օր ով արև,  
Երկրի առողջ կեանքը, երկնքի վարդն ես  
Մեզ մի թողալ տխուր, տրտում, ով արև:

Երբ որ քեզ ծածկում են անգուլթ ամպերը  
Ձեն կամենում բացւի քո յոյս պատկերը.  
Սպասում են քո բացւելուն վարդերը,  
Գործդ անկատար է մնում, ով արև:

Արև, լաւ իմանաս, այսօր չի մեռակ,  
Սև ամպերի տակին՝ փակւած շարունակ

Յանք ու վարի, հունձ ու կալի ժամանակ  
Ձեռ բացըլում մէկ օր արդար, ով արև:

Անհամբեր կսպասեմ ես քեզ օրական  
Դու մեզ ամենքիս էլ այնքան շատ ես դիւրեկան  
Թէ լինէի ես էլ մի լաւ գիտնական,  
Կգովէի քեզ աւելի ով արև:



### Գ Ո Ի Թ Ա Ն

«Մանիր, մանիր իմ ճախարակ»-ի եղանակով:

Վարիր, վարիր իմ կեռ գուլթան,  
Վարիր սարեր ու ձորեր.

Բայց մի վարիր անբեր հողեր,  
Որ չեն լրցնում մեր հորեր:

Շատ ժամանակ հոր եմ լցրել,  
Ունեցել եմ լաւ արտեր,  
Բայց հիմա ուտելիք չունենք,  
Ինչով հոգամ իմ ցաւեր:

Մեծ հողերս ցել եմ վարել,

Յանել ցորեն ու գարի.

Բայց ի՞նչ արած օգուտ չկայ,

Առնում ենք ամեն տարի:

Ամառ գարուն անձրևի տակ,

Գիշեր ցերեկ քրնահար.

Հոտաղներըս արտասուելով՝

Չարչարում են յուսահատ:

Յորեն չունենք, գարի չունենք,  
Ոչ կերակուր մէկ աման.  
Խեղճ լուեցու օրըն է հատել,  
Չունեն շապիկ, ոտնաման:



### Ա Ն Հ Ո Վ Ի Ի Ո Չ Խ Ա Ր Ը


Անհովիւ ոչխարը միշտ չունի արօտ  
Կանաչ դաշտերին մնում է կարօտ,  
Ամառը չունի սար, ձմեռը չոր խոտ  
— Ո՞ւր է հովիւ պահի ոչխարն անփաս,  
Գայլերից պէտք է միշտ հեռու մնաս:

Ոչխար անմխիթար դու մխկտալով,  
Չարչարեցար բուրթ ու պանիրը տալով  
Կթիչն ու մկրատը յետնիդ ման գալով.  
Ո՞ւր է հովիւ պահի ոչխարն անփաս,  
Գայլերից պէտք է միշտ հեռու մնաս:

Հովիւները քնած, ոչխարը տխուր  
Գայլերը ման կգան ատամները սուր  
Տարան իմ դօշ թոխլին չիմացայ մէկ լուր.  
— Ո՞ւր է հովիւ պահի ոչխարն անփաս,  
Գայլերից պէտք է միշտ հեռու մնաս:

Շահինեանցս դեռ չգտած կորածին  
Մի տխուր լուր բերին գողի տարածին,  
Աւելի ցաւ տուց գայլի կերածին.

—Ո՞ր է հովիւ պահի ոչխարն անփնաս,  
Գայլերից պէտք է միշտ հեռու մնաս:



## Ս Ի Ր Տ

Ով սիրտ մէկ ժամ դու լինում ես ծաղկի բու,  
բաստան,

Ինչպէս գարնան ծաղիկ սիրուն բաց կըլես.

Մէկ ժամ մոռանում ես հաւատ, Հայաստան,  
Իրաւ կփոշմանես, վաղը լաց կըլես:

Մէկ ժամ դու պայծառ ես վառ լոյսի նման,

Մէկ ժամ խիստ տխուր ես անյոյսի նման.

Մէկ ժամ զւարթ կըլես նոր բոյսի նման՝  
Ինչպէս պարզ գիշերւայ շաղը թաց կըլես:

Միրի հաւատ, կրօն աշխարհը բան չի,

Սուրբ գրքի խօսքերը ուղիղ ճանաչի.

Շահինեանց քեզ համար սա մշտական չի

Մէկ օր աշխարհիցը գնացած կըլես:



«Ձայնը հնչեց էրգերումի» եղանակով:


Որքան կամեցայ լաւ ապրել, օրս վատ գնաց,  
Անցած օրերս էլ չեմ տեսնում՝ կորցրի անդարձ  
Անցած կեանքիս արեգակը մեծ լոյս էր տալիս,  
Այսօրւանը երևում է ինչպէս խաւարած:

Ամեն մարդ կուզի լաւ ապրել և անուն թողալ,  
Բայց ապերախտ մարդը ոչինչ չի ստանալ.

Ձուր է մարդուս էս կեանքի մէջ տրամիլ, Եւ-  
դանալ,

Որովհետեւ էս աշխարհում ոչ ոք չի մնալ:

Որքան մի քաջ թագաւորներ անցան, գնացին,  
Որքան զիտուն, իմաստուններ անցան, գնացին,  
Երջանիկ կեանք, անուշ օրեր անցան, գնացին,  
էս մեղաւոր Շահինեանցիս տխուր թողեցին:



## Ս Ի Ր Տ

Ով սիրտ, բնութիւնըդ ինձի չի յարմար՝  
Երբեմն առողջ ես, երբեմն տկար.  
Երբեմն լինում ես նոր բաց էլած վարդ,  
Երբեմն մնում ես տխուր ու անձար:

Երբեմն ընկնում ես մտքերի տակը

Երբեմն լինում ես աղբիւրի ակը.

Երբեմն լինում ես արև զիպած սար,

Երբեմն էլ արև չտեսած ծմակ:

Ով սիրտ! չէ, ինձ շատ շուտ ձեռացրիւր-  
Վատ բնութիւնովդ շուրախացրիւր.  
Մանկութեան օրերս դու զուր կորցրիւր,  
Շահինեանցս չգտաւ սրան մէկ ճար:



## Ծ Ե Ր Ո Ի Թ Ի Ի Ն

Առաջ բերեմ յանցանքներդ ծերութիւն,  
 Բազմացել են քո մեղքերդ ծերութիւն...  
 Դողդողում են անդամներդ ծերութիւն  
 Ծանրանում են սկանջներդ ծերութիւն  
 Աւելանում քո վէրքերդ ծերութիւն:  
 Առաջ բերեմ յանցանքներդ ծերութիւն  
 Բազմացել են քո մեղքերը ծերութիւն:

Սիրող ուզած տեղը չես կարող գնալ  
 Ոչ նստած տեղիցդ կարաս վեր կենալ,  
 Ստացար թոքացաւ հազալ ու թքալ՝  
 Ծանօթներդ չեն կամենում մօտըդ գալ:  
 Արի ուզի տկար անհիդ մահանալ  
 Չորացել են երակներդ ծերութիւն:  
 Առաջ բերեմ յանցանքներդ ծերութիւն,  
 Բազմացել են քո մեղքերդ ծերութիւն:  
 Տխուր, տրտում մէկ անկիւնում ես նստած  
 Դառը վիճակի մէջ սնբաղդ ծերացած,  
 Փառք տուր քո Աստծուն, դու չնեղացած  
 Քանի մարդ կայ ձեզնից առաջ գնացած  
 Էն կեանքումը տունըդ շինած, դուռդ բաց...  
 Սպասում են ընկերներդ ծերութիւն:  
 Առաջ բերեմ յանցանքներդ ծերութիւն  
 Բազմացել են քո վէրքերդ ծերութիւն:  
 Շահինեանցս ոչ Շիրին եմ, ոչ Թուշար  
 Թէ լաւ երգեր ասեմ, թողնեմ ձեզ համար...

Հոյս աշխարհից դէպի մութը ճանապարհ  
 Բողորն էլ ունին՝ թէ մեղաւոր, թէ արդար...  
 Գերեզմանիդ վրա երբ որ կգնեն մէկ քար  
 Կվերջանայ քո ցաւերդ ծերութիւն:  
 Առաջ բերեմ յանցանքներդ ծերութիւն,  
 Բազմացել են քո մեղքերը ծերութիւն:



## Պ Ա Ր Տ Է Չ

Հայրենիքից ինձ մնացած  
 Ունիմ մի փոքրիկ պարտէզ.  
 Չորս բոլորը բաց մնալուց:  
 Չեմ ստանում օգուտ ես:  
 Ես կը շինեմ քո պատերը՝  
 Չգողանան օտարներ.  
 Թող բաց լինին քո վարդերդ՝  
 Ուրախ երգեն սոխակներ:  
 Գարուն բացւեց կանաչեցէք,  
 Եւ ծաղկեցէք իմ ծառներ.  
 Տեսնում էք, որ միշտ ծաղկում են  
 Դրացիներինը հազարներ:  
 Այսօրւանից բահը ձեռքիս  
 Արևի դէմ կաշխատեմ,  
 Այգեպանս միշտ յուսով եմ  
 Պատու բերես՝ օգուտւեմ:



Ա Ի Ե Ր Ա Կ Ա Յ Կ Ի

Պապերիս աւերակ այգի  
 Զգում էք մեր այգու ծառներ  
 Այգեպան չունիք նորոգի,  
 Զգում էք մեր այգու ծառներ  
 Թոռոմել են ձեր ծաղիկներ:

Յուրար տարել է ճղներդ  
 Զի կանաչում տերեւներդ  
 Ո՞ւր է աննման վարդերդ.  
 Զգում էք մեր այգու ծառներ  
 Թոռոմել են ձեր ծաղիկներ:

Քանի տարի է չեմ ջրում.  
 Առանց ջուր պտուղ չէք բերում  
 Թշնամին կացինն է սրում  
 Կսում էք մեր այգու ծառներ,  
 Յոյս կայ բացւեն ձեր ծաղիկներ:

Ո՞վ է փշրել ձեր դռները,  
 Ո՞ւր է ձեր կարմիր նռները,  
 Հարիւրաւոր պտուղները.  
 Զգում էք մեր այգու ծառներ,  
 Թոռոմել են ձեր ծաղիկներ:

Անգութ ու անխիղճ դատում են,  
 Միրելու տեղ առում են,  
 Օտարները կտրատում են,  
 Զգում էք մեր այգու ծառներ  
 Յոյս կայ բացւին ձեր ծաղիկներ:

Պահապանդ հեռացել ա,  
 Կոյր բաղրըդ քեզ մոռացել ա,  
 Պաղ աղբիւրդ չորացել ա,  
 Զգում էք մեր այգու ծառներ.  
 Թոռոմել են ձեր ծաղիկներ:

Գիտեմ, որ ձեզ այն է արժան,  
 Որ ունենաք քաջ այգեպան.  
 Պաղ ջուր բերի ձեզ օրական,  
 Զգում էք մեր այգու ծառներ,  
 Յոյս կայ բացւի ձեր ծաղիկներ:


Շահինեանցս երբ կտեսնի,  
 Առաջւայ պէս քաղցր պինի.  
 Տանձ ու խնձոր ու նռնենի  
 Զգում էք մեր այգու ծառներ,  
 Թոռոմել են ձեր ծաղիկներ:



\* \* \*

Ահա ձեզ յայտնեմ բաղրիս շրջանը,  
 Վիճակս ծանրացաւ մեծ սարի նման.  
 Ում լաւութիւն արի, վերջը ուրացաւ,  
 Բէլիսը սատանայի էն չարի նման:

Մէկ միջոց պատահեց ինձ ձախորդութիւն,  
 Եղբայրս չէր ուզում ինձ յաջողութիւն,  
 Ում որ արի հազարներով լաւութիւն,  
 Նա իմացաւ ինչպէս մի փարի նման:



Շահինեանց, բարերարդ ճանաչի.  
Վատ մարդի երեսը վերջը կամաչի,  
Ապերախտի ցանքը հէջ չի կանաչի,  
Նա կմնայ ինչպես սև վարի նման:



Ճ Լ Ա Տ.

Հարուստ ժլատը, բազում գանձասէր  
Կարող եմ ասել մեծ գումարի տէր,  
Բայց նա ապրում էր աղքատի շարում  
Բերանը փակած ուտել չէր կարում:  
Հողատան միջում ապրում էր անկարգ  
Անկիրթ ժլատը չունէր մի յարգանք:  
Անբաղդ որդիքն էլ, անհանգիստ օրում  
Ուսումից զրկած, մութը խաւարում:  
Չարչարանքի մէջ, դառն տանջանքով  
Գլխին հին գգակ, պատուած շորերով.  
Աղքատ տկարին նա չէր ողորմալ,  
Կոպէկի համար կողգէր հոգին տալ:  
Երկար չտեսց հարուստութիւնը  
Ձեռքիցը գնաց կարողութիւնը.  
Աղքատ մահացաւ հին մրտա տանը  
Ոչինչ չտարաւ նա գերեզմանը:



## Ա Շ Ն Ա Ն Գ Ի Շ Ե Ր

Աշնան գիշեր, անուշ քունս չի տանում,  
Ծանրանում է սարի նման գիշերը,  
Տեղս եմ մտնում ցաւերս են շատանում  
Փափուկ բարձս է քարի նման գիշերն,  
վայ գիշերը:

Ով քուն չունի՝ ցաւակից է ցաւերիս  
Մտածմունքս վնաս բերուց աչերիս  
Կեանքս լաւ էր էն շուտ անցած օրերիս  
Հիմա՝ վրտս ծանրանում է գիշերը  
վայ գիշերը:

Դառը գիշեր, աջ ու ձախ եմ շուռ գալիս  
Իմ ցաւերիս մէկ փրկութիւն չի գալիս  
Առողջ կեանքս տկարութիւն է տալիս  
Ու սպանում չարի նման գիշերը  
վայ գիշերը:

Երկար գիշեր, լուսացնելու յոյս չկայ,  
Աղօթարանը չը բացում լոյս չկայ,  
Մէկ օր կասէք, Շահինեանցին ափսոս չկայ,  
Կմնայ խաւարի նման գիշերը  
վայ գիշերը:



## Ա Չ Խ Ա Ր Հ

Արի նստենք քեզ հետ դատի  
Մէկ մարդ չպահեցիր, աշխարհ.  
Ով որ ուրախ մտաւ քո մէջ  
Լացով դուրս զրկեցիր, աշխարհ:

Այս ի՞նչ բան է քո արածը.  
Ոսկի էր պապիս բերածը  
Պղինձ է քո յետ աւածը.  
Քանիսին խաբեցիր աշխարհ:

Տեսնում են ուղիղ չես դատում,  
Խաբեբայ ես չեն հաւատում.  
Որքան ուտես չես կշտանում,  
Էլ սոված մնացիր աշխարհ:

Դաշտերդ ներկեւած արիւնով  
Մպանում ես չարչարանքով.  
Թէ բաւական չես այդքանով,  
Մեզ էլ տա՛ր, կշտացիր աշխարհ:

Գիտե՛մ ինչեր կան քո տակին,  
Արիւնակեր ես ահագին.  
Այսքան դարերում ծնւում են  
Դու փորդ քաշեցիր աշխար:

Քո մէջ մտաւ որքան հողի,  
Զթողիր տիրանայ մի փառքի.  
Քանի, քանի հազար մարդի  
Անվախ կլանեցիր աշխարհ:

Ադամայ հետ քո մէջ մտած  
Ասա տեսնե՛մ՝ որը խնդաց.  
Գիշեր ցերեկ դռներդ բաց  
Եկողին ճամբեցիր աշխարհ:

Շահինեանցս ոնց հաւատամ,  
Քեզ փորձել եմ հազար անգամ.  
Մահկանացու՝ ես էլ կերթամ,  
Դու անմահ մնացիր աշխարհ:



## Պ Ա Ր Ո Ի Ն Լ Օ Բ Ի

Ուրբաթ օրը մէկ տեղ նստած,  
Հարսանիքում հրաւիրեւած,  
Երբ որ բերին լաւ խորոված,  
Օրդ կորաւ պարոն լօբի:


Գիշերը հազիւ եփեցիր,  
Ամենից առաջ գնացիր,  
Սեղանումն անշարժ մնացիր,  
Օրդ կորաւ պարոն լօբի:

Ուսումնական, լաւ վարժապետ,  
Առ երես տկար վարդապետ,  
Պասին կուտեն եղ ու կատկետ,  
Օրդ կորաւ պարոն լօբի:

Ով որ հինգ շահի փող ունի  
 Նրա մօտ պատն ինչ կլինի  
 — Լաւ խորոված կարմիր գինի  
 Օրդ կորաւ, պարոն լօբի:

Իբրև գիտուն քահանի ցեղ  
 Խելքով աղքատ, սեսքով տգեղ  
 Էլ չթողին մի հայ անմեղ,  
 Օրդ կորաւ պարոն լօբի:

Մեծ պասին թիֆլիզի ճաշը  
 Եղն երեսին տաւրի խաշը  
 Իշխանաձուկ թարթի դօշը  
 Քեզ ով կուտի անբաղդ լօբի:



Անխիխճ օրեր մեզ ատում են.  
 Մնացինք թշւառ տարաբախտ  
 Մեզանից լաւէ հօպօպ դուշը  
 Անտառ ունի որպէս գրախտ:

Երանի մեր հին պապերին,  
 Բարի վիճակում մահացան  
 Այժմեան ծնուած անբախտները  
 Որքան ցաւերի տիրացան:

Որքան ապրեցինք չունեցանք,  
 Բարի վիճակ երջանիկ կեանք,

Միթէ Աստուած պէտք է ներէ  
 Զուրը մեզ մօտ ծարաւ մնանք:

Անցաւ անցկացած օրերը  
 Մեզ տւին դառը տանջանքը.  
 Առանց կրակ մեզ այրում է  
 Աբէշիկների վարմունքը:

Բախտաւոր են թռչունները  
 Ման են գալի բաց օդում  
 Երջանիկ են Սոխակները  
 Հայրենիքիս պարտիզումը:

Երանի ձեզ գոյք աղանիք  
 Ապրում էք ազատ երջանիկ  
 Թեքը չունիմ ես էլ թռչեմ  
 Ապրեմ ձեզ հետ ինչպէս թռչնիկ:

Երանի լինէի թռչուն,  
 Որոնէի մայր Հայաստան  
 Հայաստանից լուր բերէի  
 Անբախտ հայերուն ինձ նման:

Շահինեանց եթէ համբերէք  
 Կը հասնէք ձեր նպատակին  
 Չմեռը վարդը չի բացւում  
 Սպասում է ժամանակին:



## Պ Ա Ն Ի Ր

Ման եմ գալիս տեսնեմ, ո՞ւր ես դու պանիր  
Ախորժալի կերակուր ես դու պանիր,  
Սեղանի մէջ թագաւոր ես դու պանիր,  
Մի՞թէ այդքան զօրաւոր ես դու պանիր,  
Ամեն բանից գլխաւոր ես դու պանիր,  
Բայց ի՞նչ արած միշտ խոնարհ ես դու պանիր,  
Ման եմ գալիս տեսնեմ, ո՞ւր ես դու պանիր,  
Ախորժալի կերակուր ես դու պանիր:

Բազէի կանաչ թերից ընդունակ ես դու,  
Ծառների մրգերից ընդունակ ես դու,  
Ծովերի ձկներից ընդունակ ես դու,  
Կաթ ու մածուն, սերից, ընդունակ ես դու,  
Ամեն կերակրից ընդունակ ես դու,  
Ամենից շուտ հարկաւոր ես դու պանիր:  
Ման եմ գալիս... (կրկնել վերջի 2 տողը):

Թէև կերակուրներ շատ կայ զանազան,  
Առանց պանիր շնորհք չունի ոչ մի բան,  
Աղքատ, հարուստ, մշակ կամ վաճառական,  
Սեղաններում պատրաստում են մշտական,  
Շահինեանցըս պէտք է գովեմ քեզ արժան,  
Ոորովհետև բախտաւոր ես դու պանիր:  
Ման եմ գալիս... (կրկնել վերջի 2 տողը):




## ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՐՍԱՆԵԱՅ

Նւիրում եմ օրհնութիւնը  
Քո նոր ծաղիկ հարսն ու փէսին  
Եւ օրհնէ Տիրոջ անունը,  
Քո նոր ծաղիկ հարսն ու փէսին:  
Խաչեղբայրն էլ ի միասին,  
Օրհնութիւն ատենն Յիսուսէն,  
Աստուծ պահէ քո հանդիսին,  
Եւ նոր ծաղիկ հարսն ու փէսին:

Քո ծերութեան ժամանակը,  
Պայծառ բացւի քո ծաղիկը,  
Ամուր կապ լինի պըսակը,  
Քո նոր ծաղիկ հարսն ու փէսին:  
Միշտ կանաչ տեսնես քո ծառը,  
Մինչև լոյս ճրագըդ վառը  
Օրհնութիւն տայ Մայր Աթոռը .  
Քո նոր ծաղիկ հարսն ու փէսին:

Չորս գըլուխ աւետարանը,  
Ամենասրբոց բերանը,  
Անփորձ պահի սուրբ Սևանը  
Քո նոր ծաղիկ հարսն ու փէսին:  
Շահինեանցս անարժան եմ:  
Մեղաւոր բերանով մաղթեմ,  
Օրհնութեան նամակ նւիրեմ  
Քո նոր ծաղիկ հարսն ու փէսին:



Ս Ի Ր Ո Յ Ե Ր Գ Ե Ր

Սիրոյ քաղաքումը վաճառական եմ,  
Սիրեկանիս համար ի՞նչ առնեմ հիմա.  
Ոսկի մատանինէր թանգազին ակնով  
Ո՞ւմ հետ ուղարկեմ, ի՞նչ անեմ հիմա:

Սիրոյ պարտէզը մտնելը վատ է,  
Սիրահարւած մարդու ցաւերը շատ է.  
Երանի նրան, ում կեանքն ազատ է—  
Ես ազատ կեանք չունիմ, ի՞նչ անեմ հիմա:

Խելքս կորցրել եմ, ուշքով տարւած եմ,  
Էս ոչինչ բաներում սիրահարւած եմ,  
Մտքիս ծովերու մէջ ցաւով խրւած եմ  
Ցաւիս վերայ դարման ի՞նչ դնեմ հիմա:

Շահինեանցս շատ տեղեր եմ ման եկել,  
Այսպէս ցաւեր ոչ քաշել եմ, ոչ տեսել  
Սիրեկանիս մնաս բարե չեմ ասել  
Գիտեմ նեղացել է, ի՞նչ անեմ հիմա:



Ա Յ Ա Ղ Զ Ի Կ

Գիշեր ցերեկ կրակդ ինձ վառում ա  
Յոյս կայ ինձ կտայ մէրդ այ աղջիկ  
Կայքիս կէսը մատող կտամ Աստուծն  
Թաք չկտրի ինձնից սէրդ այ աղջիկ:

Պատկերդ զեղեցիկ, ունքերդ կամար  
Աշխարհումս դու միակն ես ինձ համար.  
Արի ընկերանանք կմնանք օտար,  
Տանը քեզ չի պահի հերդ այ աղջիկ:

Աղջի դու աննման, ինքդ նորաբոյս  
Մերդ խօսքա տւել չմնանք անյոյս  
Շահինեանցիս պահի ափսոս եմ, ափսոս  
Ինձ զբաւեց սև աչերդ այ աղջիկ:



Ս Ի Ր Ո Յ Ե Ր Գ

Սիրուն ես արևի նման, սով իմ սիրունի  
Նոր բացւած նուբարի նման, սով իմ սիրունի  
Չայն եմ տալիս, ձայն չես տալիս որպէս նեղացած  
Մի անիլ օտարի նման սով իմ սիրունի:

Սիրուն Աստուածդ կսիրես անգութ մի լինիլ  
Մեր ունեցած պայմաններին դու սուտ մի լինիլ  
Դաշտի ծաղիկի պէս անհոտ մի լինիլ  
Հոտ սուր Սուսամբարի նման, ով իմ սիրունի:

Գեղեցկութիւնն էլ բան չի, անցնում է գնում.  
Աշխարհիս կայքն էլ մի բան չի մարդուս չի մնում  
Թող ունենանք անթառամ սէր, լաւ է աշխարհում  
Չլինենք անսէրի նման ով իմ սիրունի:



\* \* \*

Մէկ օտար տղայ էի եկայ ձեր դուռը  
Ասի մի շուր դուրս բեր, սառը, այ աղջիկ.  
Երեսըդ արեգնական թուշդ վարդի պէս  
Դու ես մի աստուծու գառը այ աղջիկ:

Խնդրում եմ մէկ անգամ ինձ հրաւիրես  
Աստուածդ կսիրես ձեր տուն տանես  
Այ վառ թշերդ թաւաղա անես,  
Ինձ համար կլինի Գանջու նուռը այ աղջիկ:

Այսօր Շահինեանցիս միտքը տարել ես  
Առանց կրակ սրտիս մէջը այրել ես  
Միթէ դու ինձանից լաւին ճարել ես  
Մի լինիր ինձ համար գառը այ աղջիկ:



### ՔԱՆԻ ՄԻՆ ՔԱՆԻ

Բաւական համարի ինձ մի չարչարի,  
Ամեն օր խաբելդ քանի մին քանի.  
Աստուածդ կ'սիրես ուղիղ ման արի,  
Ապերախտ, խաբելդ քանի մին քանի:

Ազնիւ անձը ինչո՞ւ պէտք է սուտ խօսայ.  
Խաբեբային երբէք յաջող չտեսայ,  
Արի մի ուրանա ճշմարիտն ասա  
Ամեն օր խաբելդ քանի մին քանի:

Խնդրում եմ նախանձը սրտիցդ հանես,  
Կամ ինձ մօտդ պահես, կամ ազատ անես.  
Ոչ թէ դատարկ խօսքով մարդու սպանես,  
Ամեն օր խաբելդ քանի մին քանի:



### Պ Ի Վ Ա Ն Ի

Քաջ սիրտս ման գալ է ուզում, հետները սի-  
րունների.  
Հրեշտակի ձեռքով քաշած ունքերը սիրունների  
Որտեղ մի շուր տղայ կայ գեղեցիկ աղջիկ  
կուզի  
Ափսոս է նրան մտիկ տալ աչքերը սիրունների:

Արծաթէ նալ կօշիկներով ոտքերը սիրունների  
Ոսկէ մատանիները շարած մատները սիրունների  
Սիրունը սիրունի առնի մուշ գիշերն էլ ցերեկա  
ձրագի տեղն էլ լոյս կտայ աչքերը սիրունների:

Որքան գովեմ գովելի է մազերը սիրունների  
Մայիսի վարդից գեղեցիկ այտերը սիրունների  
Շահինեանցս սխալած չեմ, կարծեմ դուք կըն-  
դունէք

Արևի նման կփայլի պատկերը սիրունների:



\* \* \*

Ով իմ աննման  
Ազնիւ, գովական.  
Դու ես ինձ համար  
Անկեղծ սիրական:

Պարկեշտ ման արի,  
Արժես հազարի.  
Ապրենք երջանիկ,  
Բաւական տարի:

Վարդ ես պարտիզում.  
Տեսայ երազում.  
Նազով մանգալդ,  
Գրաւեց բազում:

Քայլդ կաքաւի  
Լեզուդ Սոխակի  
Գոյնդ նման  
Մայիսի վարդի.

Արև փայլատու,  
Լուսնից լուսատու.  
Բալասան ծաղկից  
Գեղեցիկ ես դու:

Սև-սև մազերդ,  
Կեռ կեռ ունքերդ,  
Մարդ են գրաւում  
Թուխ-թուխ աչերդ

Ծոցդ վարդարան,  
Գիրկդ ննջարան,  
Շահինեանցիս համար  
Սիրադ բուրաստան:



\* \* \*

Գիշեր, ցերեկ բոցի նման  
Քո սիրովդ վառում եմ.  
Ե՞րբ կտեսնեմ քեզ ինձի տայ  
Անզուժ մայրդ օրիորդ:

Միշտ ըս սէրիդ ես փափագ եմ,  
Սպասում եմ անհամբեր,  
Տեսութիւնիդ, ուրախ դէմքիդ  
Թուխ աչերուդ, օրիորդ:

Պարտիզումը ման ես գալիս  
Վարդը ձեռքիդ երգելով,  
Սիրտ կտրատող սրի նման  
Քո երգելդ օրիորդ:

Մարդասպան ու հոգեհան  
Լուսաշաւիղ պատկերդ.  
Քեզ տեսնողին գրաւումա  
Քաղցր սէրդ օրիորդ

Որպէս սոխակ վարդին կարօտ  
Շահինեանցս քեզ համար

Ես միամիտ՝ ինձ գրաւեց  
Թուխ ունքերդ օրիորդ:



\* \* \*

Այսօր ինձի անլոյս եկաւ նոր տարի  
Աղաչեցէք մեր Աստուծոց փրկութիւն,  
Գուցէ Աստուած ձեր խնդիրը կատարի,  
Աղաչեցէք մեր Աստուծոց փրկութիւն:

Դանակ չունիմ մատիտիս ծէրը սրեմ  
Աչքը չունիմ՝ միտքս բոլորը գրեմ  
Բուրաստանս զնամ, վարդերս շրեմ,  
Աղաչեցէք մեր Աստուծոց փրկութիւն:

Ամառայ օրերս անցան, զնացին,  
Պարտիզուս ծաղիկներս անջուր մնացին  
Մոլորած սոխակները ողբալով լացին  
Աղաչեցէք մեր Աստուծոց փրկութիւն:



Մ Ո Ի Խ Ա Մ Բ Ա Չ

Տղայ աղջիկ սէր չունենան,  
Անսէր տիրանալը վատ է.  
Բարի ծնողներ չունենան  
Խաբւին, գանձով տալը վատ է:

Վատ բանի երաշխաւորի  
Մեռնելուց մնալ վատ է.  
Ոսկի պսակ ունեցողին,  
Վերջը յետ դառնալը վատ է:

Տասը չափի մին կտրածի  
Կտրածի յետ տալը վատ է.  
Անցած անդառնալի օրը  
Էլ չենք տեսնի, լալը վատ է.

Տղայ աղջիկ սէր չունենան  
Անսէր տիրանալը վատ է,  
Բարի ծնողներ չունենան  
Խաբւին գանձով տալը վատ է:

Անհամաձայն անսէր մարդիկ համարեա տուն  
չեն ունենայ  
Մէկզ-մէկու դժար եկած մի հանգիստ քուն  
չեն ունենայ  
Օրերը ցուրտ, տխուր կանցնի, ամառ, գարուն  
չեն ունենալ,  
Մէկ օր տանը, հինգ օր դրաց, բարի անուն  
չեն ունենալ:  
Վատի պատճառը ովքեր լինին արքայութիւն  
չեն ունենալ,  
Լաւ է ազեղ սիրեկանը՝ անսէր ունենալը վատ է:

Տղայ աղջիկ, և այլն.

Վայ էն ծնողների հոգուն արաղի խաբւած  
կը լինին,

Ձեն մտածի վերջի օրը ինչ առարկայ բաց կը  
լինի.  
Տղայ աղջիկ առանց կամքի պսակ գնացած կը  
լինին,  
Արևն անլոյս, օրը խաւար, մոլար մնացած կը  
լինին:  
Երիտասարդ ընկերներին միշտ ուրախ տեսած  
կը լինին,  
Ամեն մէկ թանկագին բանի հալածից անհալը  
վատ է:

Տղայ աղջիկ և այլն...

Մեզ ամենքիս էլ յայտնի է անհամից համեղը լաւ է.  
Անօգուտ քաղաքներից օգուտաւոր գիւղը լաւ է,  
Անսէր սիրուն ունենալուց, սիրեկան տգեղը լաւ է,  
Անսէրի ձեռքի վարդիցը սիրոյ մահադեղը լաւ է,  
Ծուռ ճանապարհով երթալուց կարծեմ որ ուղիղը  
լաւ է.  
Շահինեանցիս պատուէրը ձեզ՝ ընկերով ման  
գալը լաւ է:

Տղայ աղջիկ և այլն...



Մ Ո Ւ Խ Ա Մ Բ Ա Ձ

Մարդ իր անկեղծ բարեկամին կեանք նուիրի  
դարձեալ քիչ է,

Թանկագին հոգուցն աւելի նրան սիրի՝ դարձեալ  
քիչ է:  
Լաւ բարեկամին ամեն օր հրաւիրի՝ դարձեալ  
քիչ է,  
Ունեցած կարողութիւնը թէ զո՞հ բերի, դարձեալ  
քիչ է,  
Ամեն կարիք ու խնդիրը թէ կատարէ, դարձեալ  
քիչ է,  
Ողորմասիրտ, բարի մարդը սրբան տիրի, դար-  
ձեալ քիչ է:

Մարդ իր անկեղծ բարեկամին և այլն.

Բարեկա՛ն նրան եմ ասում՝ քեզ իրանից շատ է  
ուզում,  
Վատ օրիդ տխուր է լինում, լաւ օրդ անհատ է  
ուզում.  
Բարիքդ նրան պարգևէ, ով բարի խրատ է ուզում.  
Էն բարեկամին դու սիրէ՛ միշտ սէրը հաստատ է  
ուզում.  
Ցաւիդ ցաւակից է լինում, ցաւերուդ մի ճար է  
ուզում:

Սրտացաւ բարեկամներդ թէ՛ հազար են դար-  
ձեալ քիչ է:

Մարդ իր անկեղծ բարեկամին և այլն.

Վաթսուն տարեկան հասակում, ահա ես մէկ  
լուր եմ ասում  
Կեղծաւոր բարեկամ շատ կայ, չկարծէք թէ զուր  
եմ ասում

Ձեռքովս տուած գանձերը աղաչելով «տուր» եմ  
ասում:

Արած լաւութեան դէմը, դուրս են բերում սուտ  
եմ ասում:

Երբոր թշնամիս է իմ դէմ, էլ աւելորդ ուր եմ  
ասում:

Շահինեանց դատողութիւնդ թէ արդար է դար-  
ձեալ քիչ է:

Մարդ իր անկեղծ բարեկամին...



### ԱԻԵՐԱԿ ԳԻԻՂ

Ժողովուրդդ սրտեղ զնաց

Մնացիր աւեր հայ գիւղ,

Եկեղեցիդ տխուր մնաց

Մնացիր աւեր հայ գիւղ:

Սեղանիդ օծած քարերը

Համբուրում են ոչխարները,

Մեղաւոր են Արամները,

Մնացիր աւեր հայ գիւղ:

Ունէիր գեղեցիկ աղբիւր

Ցամաքեց էլ չի տալիս ջուր

Ո՞ւր է բերան օրհնէ մաքուր,

Մնացիր աւեր հայ գիւղ:

Հայոց վանք, հայոց քաւարան

Խնդրենք Աստուած միաբերան

Քեզ բաց անի մէկ վարդարան,

Մնացիր աւեր հայ գիւղ:

Անցաւ զնաց հնութիւնդ,

Պատուական էր շինութիւնդ,

Մոռացուել է քո անունդ

Մնացիր աւեր հայ գիւղ:

Էլ չի ջրում պարտէզներդ,

Բաց չեն լինում ծաղիկներդ,

Քանդուել են քո պարիսպներդ,

Մնացիր աւեր հայ գիւղ:

Շահինեանցս միտք անելով

Մրացի տխուր ման գալով

Երգեցի ողբալով, լալով

Մնացիր աւեր հայ գիւղ:



### ԼՕՌՈՒԱՅ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Տկար են մեր Լօուս անբաղդ դաշտերը,

Ձուր է չարչարանքով անել վար ու ցանք,

Դատարկ են մնում պապի շինած հորերը,

Ձուր է չարչարանքով անել վար ու ցան:

Լօուս դրութիւնը միշտ վատ է զնում,

Շատ ժամանակ ցանքերը սև են մնում,

Տարեկան ուտելիքը ծախու եւն գնում,  
Զուր է չարչարանքով անել վար ու ցան:

Յայտնեմ ինչպէս է Լօռու վիճակը,  
Ամսով չի չորանում կալերի տակը,  
Մենք ոնց տանենք երկնքի էս կատակը  
Զուր է չարչարանքով անել վար ու ցան:

Օրական անձրե է կարկտախառը  
Յուսահատ տանջում ենք օրերս դառը,  
Քառասուն օր արև չունի ամառը  
Զուր է չարչարանքով անել վար ու ցան:



### ԱՂՔԱՏ ԳԻՒՂԱՅԻՆ

Խեղճ գիւղացին երկու եզ ունէր մի կով,  
Դաշտ է դարկում՝ պահող չունի ի՞նչ անի.  
Ուզում է պատրաստել չուլթ ու գուլթանը,  
Բայց վարելու մի հող չունի ի՞նչ անի:

Օրի մէկը կանչեց իր հարևանին,  
Ասաց. «Ի՞նչ ես լուռ նստել նայենք մեր բանին».  
Պատասխանեց «խոփ չունի մեր գուլթանին  
Շինելավարձ էլ փող չունի, ի՞նչ անի:

Միասին գնացին դարբնի հետ խօսան.  
«Մեր գուլթանը շինի» ասացին նրան,  
«Քո վարձը կստանաս կալերին ցորեն,  
Ողորմելին ածուխ չունի, ի՞նչ անի:

Տանուտէրը յարկ ու խարջը պահանջեց.  
Կովը ծախեց՝ հազիւ հոգին ազատեց,  
Երեսանցը կաթ ու մածունից զրկեց,  
Մէկ կերակուրի իւղ չունի՝ ի՞նչ անի:

Մաստիկ ձմեռ եզնանց դարմանը հատած՝  
«Մի քթոց դարման տուր», դրացուն ասաց.  
Նա էլ երեսը շուռ տւեց ոչինչ չստաց,  
Խոտ ու դարման մի ծիլ չունի, ի՞նչ անի:

Մարտ ամսումը եզնանց մինը սատակեց,  
Չեռքը ծոցին վիզն էլ ծուռը թողեց,  
Խեղճ գիւղացուն պողերն ու կաշին մնաց,  
Կաշին ցանելու աղ չունի, ի՞նչ անի:

Յուլիս ամսում միւս եզն էլ գողացան,  
Դիմեց բարեկամին՝ բոլորն ուրացան,  
Ուզեցաւ սպանել, չունէր հրացան,  
Մինչև իսկ մահադեղ չունի, ի՞նչ անի:

Տանը ալիւր չունի, ոչ մի պատառ հաց,  
Հարևանին ասաց մնացինք սոված.  
Աջ ու ձախ շուռ եկաւ խելքը կորցրած  
էլ գնալու մի տեղ չունի, ի՞նչ անի:

Մաստիկ հիւանդութիւնը տիրեց աշխարհին  
Կարօտ մնաց սրտի ուզած կամակին.  
Շահինեանց դու օգնիր աղքատ, տկարին,  
Լեզուն փակւած՝ խօսող չունի, ի՞նչ անի:



## ԵՐԱԶ ԷՐ ԳՆԱՅ

Երիտասարդ՝ երջանիկ էի ես  
 Օրերն անցկացան երազ էր գնաց.  
 Նա իբրև սոխակ, աշխարհը՝ պարտէզ,  
 Ձեռքիս չմնաց՝ երազ էր գնաց:  
 Մանկութեան օրերս երբ միտքս եմ բերում  
 Այդ միտ բերելով կեանքս ա խաւարում,  
 Ո՞վ պէտք ա մնայ այս դառն աշխարհում  
 Եկողը սիրուն երազ էր գնաց:  
 Աշխարհն ունայն ա, մարդ ուշի մնաց,  
 Ով եկաւ աշխարհ, դատարկ էլ գնաց,  
 Ասէք՝ ողորմի քեզ էլ Շահինեանց  
 Սիրելով Աստուած՝ երազ էր գնաց:

\*  
\*

Անյոյս տկար մարդու նման  
 Մի տխրիլ, ուրախ կաց ո՞վ սիրտ  
 Արի բացւիր վարդի նման  
 Մի տխրիլ, ուրախ կաց ո՞վ սիրտ:  
 Կանցնին, կերթան վատ օրերը,  
 Փոփոխական են դարերը,  
 Քեզ նման կան հազարները,  
 Մի տխրիլ, ուրախ կաց ո՞վ սիրտ:  
 Պատէրս լսիր առաջին՝  
 Գոհ եղիր քո ունեցած քչին.  
 Կապրենք լի աշխարհի միջին  
 Ուրախ կաց, մի տխրիլ ո՞վ սիրտ:

Երբէք մի յետևիր չարին,  
 Ծոցումդ ունեցիր բարին,  
 Աստուծոց եկած նեղ օրին  
 Մի տխրիլ, ուրախ կաց ո՞վ սիրտ:

Շահինեանց զուր ես մտածում,  
 Ցաւի տէր շատ կայ աշխարհում.  
 Յոյս հաւատն է ցաւ փարատում  
 Յոյսով կաց, մի տխրիլ ո՞վ սիրտ:



## Խ Ր Ա Տ Ն Ե Ր

Առանց իրաւունքի մէկ տեղ մի գնալ,  
 Այնտեղ չեն ընդունի՝ անպատիւ կըլես.  
 Հանդէսներում բարձր տեղեր մի նստիլ  
 Կուզեն վերկացնել, անպատիւ կըլես:  
 Անփորձ մարդուն երաշխաւոր մի լինիր,  
 Անձանօթին երբէք ընկեր մի լինիր.  
 Աւագակ, գողերուն դու տէր մի լինիր,  
 Հէտները մի ման գալ, անպատիւ կըլես:  
 Նորաքիսա մարդուց ոչինչ մի առնիլ  
 Պարզ անունդ վատերի հետ մի խառնիլ,  
 Թէ չես կարող ծանր բանը վեր առնիլ,  
 Վիզդ տակը մի տալ՝ անպատիւ կըլես:  
 Ունեցածդ շուսլաբար մի վատնիլ,  
 Ձեռքիցդ ջուրը ընկնի՝ չես կարող գտնիլ,  
 Ուժիցդ դուրս գործի տակը մի մանիլ

Չես կարող կատարել, անպատիւ կըլես:  
 Խորհուրդներդ ամեն մարդու մի ասիր,  
 Կեղծաւոր խարդախին երբէք մի լսիր,  
 Շահինեանց դու անվայել մի խօսիր,  
 Ոչ ոք չի ընդունի, անպատիւ կըլես:



### ՀԱՅՐԵՆԻՔԻ Թէ ՄՈՌԱՆԱՍ...

Հայրենիքդ թէ մոռանաս,  
 Աստուած վկայ վատ է.  
 Մէկ տեղ բարերար չունենաս,  
 Աստուած վկայ վատ է:  
 Գերդաստանիցդ հեռանաս  
 Աստուած վկայ վատ է:  
 Օտար երկրում տկարանաս,  
 Աստուած վկայ վատ է:  
 Արած լաւութիւնն ուրանաս  
 Աստուած վկայ վատ է.  
 Ուրացողին ընկերանաս,  
 Աստուած վկայ վատ է:  
 Հայրենիքդ թէ մոռանաս  
 Աստուած վկայ վատ է,  
 Մէկ տեղ բարերար չունենաս,  
 Աստուած վկայ վատ է:

\* \* \*

Հօտից մէկ ոչխար հեռանայ

Գայլի կերակւր կլինի.  
 Խմբից մէկ կռունկ բաժանւի,  
 Անցնծում, ախուր կլինի:  
 Պարզուխտ, անմխիթար մարդու  
 Ցաւերը հարիւր կլինի.  
 Բազդը մէկ մարդուց հեռանայ  
 Որոնելը գուր կլինի:  
 Սոխակը իւր պարտիզում  
 Քաջ ու կտրուկ, սուր կլինի.  
 Քո վիճակին չուրախանաս  
 Աստուած վկայ վատ է,  
 Հայրենիքդ թէ մոռանաս,  
 Աստուած վկայ վատ է:  
 Մէկ տեղ բարերար չունենաս  
 Աստուած վկայ վատ է:  
 Քո հարազատ ծնողների  
 Օրերը խաւար մի անիլ  
 Սրտներու մէջ վէրք թողնելով,  
 Ցաւերը հազար մի անիլ.  
 Ազգ ու արիւնդ թողալով  
 Եղբօրդ օտար մի անիլ:  
 Անծանօթ, անփորձ մարդու հետ  
 Ամենեկին սէր մի անիլ:  
 Շահինեանցիս արի լսէ  
 Հայրենիքդ աւեր մի անիլ:  
 Մեծի խրատը չիմանաս  
 Աստուած վկայ վատ է  
 Հայրենիքդ թէ մոռանաս

Աստուած վկայ վատ է,  
Մէկ տեղ բարերար չունենաս  
Աստուած վկայ վատ է:



\* \* \*

Ինչ մարդ բարերարի վատ կամենայ,  
Նրա զուր ապրելը ի՞նչի համար է.  
Մէկ մարդ որ սրտումը նախանձ ունենայ,  
Նորան բարև տալը ի՞նչի համար է:

Աշխարհումը ծոյլ մուրացող մարդու,  
Ողորմութիւն տալու կուրացող մարդու,  
Արած լաւութիւնը ուրացող մարդու,  
Կենդանի ման գալը ի՞նչի համար է:

Անպիտան հարբեցող գինու տարուածի,  
Ծոյլ ճանապարհին սիրահարուածի,  
Հաւատից փոխուած վատ մոլորուածի,  
Աշխարհում մնալը ի՞նչի համար է:

Անողորմ հարուստ, անյարգի մարդը,  
Ձի հասկանում զուր է էս կեանքի զարդը.  
Եղբօրից, ընկերից խլած արծաթը  
Փանձանակ գցելը ի՞նչի համար է:

Շահինեանց զուր մի տարւիր խօսքերիդ,  
Կարելի է չեն հաւանում երգերիդ.  
Թէ որ ունին ալմաստ, անգին մարգարիտ  
Հողի հետ խառնելը ի՞նչի համար է:

## ՀՈՂԸ ԵՒ ԶՈՒՐԸ

Հողը. Ես եմ գետին, անունս հող,  
Գործս միշտ գնում է յաջող.  
Որը տիրեց բաւական փող,  
Որը հազարներով ոչխար:

Զուրը Ես եմ ջուր աշխարհ ման եկող  
Գործդ ինձանով է յաջող  
Թէ որ չտամ անձրևի ցող  
Կչորանաս, որպէս մի քար:

Հողը. Ես եմ գետին երեսս բաց,  
Հողս ոսկու հետ շաղաղած,  
Ամենայն մարդու հաւանած  
Ունիմ ամեն տեսակ ջուհար:

Զուրը Ես եմ անմահական աղբիւր,  
Սարերից իջնում եմ մաքուր  
Կըկտրեմ կերթամ առանց սուր  
Ի՞նչ կանեմ շինած ճանապարհ:

Հողը Ես եմ գետին կապրեմ դարեր  
Վրէս ունիմ բարձր սարեր.  
Մէջս աւելի անգին քարեր,  
Պտուղներս անթիւ—հազար:

Զուրը Ես եմ ջուր անգողար անքուն  
Կըպահպանեմ մաքուր անուն.  
Ես ունիմ երկու բնութիւն  
Մէկ է հեզ, միւսը խոնարհ:

**Հողը** Ես եմ գետին, վարելահող,  
Հողագործին կուշտ հաց աւող  
Աշխատողին ես չեմ գրկող:  
Ծոյլ մարդը կմնայ անձար:

**Ջուրը** Ես եմ ջուր, հեռու գնացող  
Ամենայն կեղտոտներ մաքրող,  
Որքան անասուն պահպանող  
Ման եմ գալիս որպէս սարդար:

**Հողը.** Ես եմ գետին միշտ զօրաւոր,  
Կանաչ հանդերձս է միշտ նորից նոր  
Առանց ջրի օրս չի օր,  
Հարկաւոր է խօսիլ արդար:

**Ջուրը** Ո՛չ ջուրս առանց հողի,  
Ո՛չ հողը առանց ջրի  
Հաստատութիւնն են աշխարհի  
Շահինեանց վճռէ հաւասար:



Բ Ա Ղ Դ Ը ԵՆ Ծ Ն Ո Ր Գ Ը

**Բաղը.**—Ուսումից աւելի ոչ մի բան չունիս,  
Աշխարհիս կայքիցը իսկ դու ես գրկած  
Նղբօրդ հըրաւիրես՝ կարգին տուն չունիս,  
Այնպէս էլ խորհուրդդ անկատար մնաց:

**Ծնորդը.**—Երանի ունենամ քիչ բարձր ուսում՝  
Աշխարհիս կայքերը ինձ է պարգևած.  
Մինչև իսկ չունենամ փող, կամ թէ մէկ  
տուն,

Յոյս ունեմ կատանամ բոլորը շինած:

**Բաղը.**—Ողորմութիւն տալու ձեռս բաց ունեմ,  
Աղքատների, տկարների հաց ունեմ.  
Ասածուցն էլ պարգև ստացած ունեմ,  
Թէկուզ արթուն լինեմ, ու թէկուզ քնած:

**Ծնորդը.**— Ես շատ բազում մարդ եմ տեսել ու-  
րացող,

Աղքատների ողորմալու կուրացող.  
Վերջը նրա գաւակները մուրացող,  
Ինչպէս եկաւ աշխարհ՝ յետ այնպէս գնաց:

**Բաղը.**—Փողոցները սոված, ծարաւ չափելով  
Փաստաբանութիւնով մարդու խաբելով  
Շատերին գրկելով, շատին թափելով,  
էլ վրէժ մերկ է բազուկներդ բաց...

**Ծնորդը.**—Ես լաւ հանդերձ ունեմ, ի՞նչի եմ տկուր  
Մահուդ, չուխայ, խաս արխալուխ, ա-  
մեն շոր,

Կրախմալով շապիկներս նորից-նոր  
Դու մէկ շապիկ ունիս էն էլ կեղտոտած:

**Բաղը.**—Չունիս ու կարօտ ես չութ ու գու-  
թանիս,

Քեանլան ձիուս, շատ ոչխարիս, կթանիս,  
Մեծ մլքերիս, ջաղացներիս, դուքանիս  
Որքան ուսումնական ծառայ է մտած:

Շնորհքը.— Բոլորիցը զուրկ ես, ապրում ես անկարգ  
Ուսումնականներս ունինք վարք ու բարք  
Շահինեանց, ոչ բաղդ ունիս, ոչ շնորք  
Թող Աստուած պարգևէ անհատների հաց:



### ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ԴԻՄ

Երիտասարդները մեծին չեն լսում.

«Խելքդ կորցրել ես» այսպէս են ասում

Ծաղր են անում, իզուր տեղը բամբասում  
— Թէ Աստուած կների՝ էդ էլ չգիտեմ:

Տասնէնչորս տարեկան հսկարտ պատանի  
Մէկ ձեռքին ծխախոտ, մէկ ձեռքին գինի,  
Մեծ մարդը նրա մօտ էլ պատիւ չունի  
— Թէ Աստուած կների, էդ էլ չգիտեմ:

Ժամանակս չարութիւնը պատում ա,  
Ծաղր են անում նրան ով խրատում ա,  
Շատ տղայ կայ՝ ծնողներին ատում ա,  
— Թէ Աստուած կների, էդ էլ չգիտեմ:

Միթէ չէք զարմանում դուք էս բանիցը,  
Ծնողին զրկում են իր արժանիցը,  
Առանց բաժին դուրս են անում տանիցը,  
— Թէ Աստուած կների՝ էդ էլ չգիտեմ:

Չար գաւակը մարդս չունենայ լաւ ա  
Բանի որ օգուտ չի ծնողին՝ ցաւ ա,  
Երիտասարդներին այսքանն էլ բաւ ա,  
— Թէ Աստուած կների, էդ էլ չգիտեմ:

Շահինեանցս գոհ եմ ես իմ վիճակին,  
Հարկաւոր է օրհնել բարի գաւակին,  
Յոյսները չեն դնում վատ օրինակին,  
Աստուածն էլ կների, այդ ես լաւ գիտեմ:



### Ա Չ Ն Ի Ի Չ Ա Լ Ի

Այսօր ես մէկ լուր իմացայ, իսկ քո մասին, ազնիւ Զալի,  
Յուզի արծաթով խարւեցիր, աղջիկդ գերի ես տալի,  
Գերին էլ այդպէս չեն ծախիլ, արիւն արտասուք է լալի,  
Բարեկամներդ բարկացան, ոչ մէկը տունդ չի գալի:  
Թէ մարդ լինիս, կհասկանաս, մարմինդ աղի պէս կհալի  
Իբրև թէ հարսանիք արիւր, փողով տւիր մէկ անգեալի:  
Այսօր ես մէկ լուր իմացայ, իսկ քո մասին ազնիւ Զալի:

Դու ի՞նչ Աստուած էիր պաշտում, իր սիրածին կարօտ  
գնաց,  
Մէկ այրի մարդու ծախեցիր, անպսակ, աննարօտ գնաց.  
Չհասկացար թէ ի՞նչ արիւր, սիրտը էնպէս եարօտ գնաց.  
Միթէ տաւար էիր դուրս անում, ասեն՝ «դաշտը ա-  
րօտ գնաց»

Լաւ էր մեռնէր քան թէ սրտով չսիրածին գնաց  
Հաւասարեց քո անունը մէկ անտաշ, անպիտան սալի:  
Այսօր ես մէկ լուր իմացայ, իսկ քո մասին ազնիւ Զալի:


Խեղճ աղջիկը աղաչելով եղբօրդ ասաւ «չարդ տանեմ,  
Խնդրում եմ, որ ինձ ազատես, տեսնում ես մէկ ան-  
տէր բան եմ».

Հօրեղբայրն էլ պասասխանեց, ասաց ես էդ կխափանեմ,  
Երբ նա էլ կաշառք ստացաւ, ասաւ՝ «որդի ես ի՞նչ անեմ».  
Ինչպէս անէր խեղճ աղջիկը՝ հայրն ասում էր կպպանեմ  
Այնպէս զրկեց սիրած մարդուց անբաղդ աղջիկը իւրդ-  
ճալի:

Այսօր ես մէկ լուր իմացայ, իսկ քո մասին ազնիւ Զալի:

Թէ այդքան աղքատացել ես շաբաթ օրը թաբախ կանչի  
Իրաւ մարդու շարքումը չես, գոնէ ազգիցդ ամաչի,

Ձալի աղջիկդ ծախեցիր, քո ցանածդ չի կանաչի,  
 Ասիր «ո՛վ պէտք է հասկանայ» ոչ ոք քեզ նման յի-  
 մար չի.  
 Ամօթ քեզ էսքան ժամանակ Շահինեանցիս չես ճանաչի  
 Հայութիւնդ վերջացրիր, հողով եղար Իմամ-Ղուլի:  
 Այսօր ես մէկ լուր իմացայ, իսկ քո մասին ազնիւ Ձալի:



**ՁԱԼԱԼ-ՕՂԼՈՒ ՊԱՐՄԱԻԱՆԲԸ**

Շուրջի գիւղերին չեն հաւանում Ձալալ-օղլու  
 տիկիները,  
 Աւելի աղքատ, բայց հպարտ են մեր նոր երի-  
 տասարդները  
 էս էրբ քաղաքացի դառան, մոռանում են նախ-  
 նիքները,  
 Որքան մարդ ա զարմացնում պօլիտիկով խօ-  
 սիլները  
 Երեք ձեռք ընկուզի հաշիւ մնացած օրիորդները  
 Մողայի յետեից են ընկած, մոլորած են  
 ծնողները:  
 Թէ լինէին Մոսկովեցի, կամ թէ Լոնդոն Փա-  
 րիզեցի  
 Մարդու բարև չէին առնիլ հաշուելով նրան  
 գիւղացի,  
 Ընտանիքից հրաժարւած փնտռում են օրական  
 հացի  
 Քառասուն գիւղից հաւաքւած ի՞նչով դառան  
 քաղաքացի,  
 Մեր գիւղերին ծաղր են անում, բաւականին  
 համբերեցի  
 Իրենց հպարտութիւնիցն էլցածացել է անուկները:

Երկնքումը աստղեր շատ կան՝ լուսին, արեգակ  
 չեն լինիլ  
 Դաշտերումը ծաղիկ շատ կայ, վարդ ու մխակ  
 հէջ չի լինիլ  
 Դեղնապղինձ կամ բրօնզը ոսկէ մատանի չի  
 լինիլ,  
 Սև ագռաւն էլ է թռչուն, բայց սոխակ երբէք  
 չի լինիլ,  
 Նահանգումը գիւղեր շատ կան, ոչ մէկը քաղաք  
 չի լինիլ,  
 Դա էլ մի հասարակ գիւղ է ինչացու է խօսիլները:  
 Բարևը հեռւիցը կառնեն, որքան լաւ բարե-  
 կամ լինի,  
 Երեք օր փողոցումը սոված՝ ոչ մէկը տունը չի  
 տանի,  
 Իսկ թէ մէկն էլ համարձակւի՝ կինը գիւղացի  
 կանւանի,  
 Հարամ ըլի էն պատիւը, մականունով դուրս  
 կը հանի.  
 Ափսոս որ նրանց միջումը ազնիւ, լաւ մարդ կայ  
 մի քանի  
 Ափսոս վատի հարեան են, ընդունում են բա-  
 րենները:



**ԳԻՒԶԱԼԱՄԱ ԹԷՃՆԻՍ**

(Տաճկական լեզուով)

Սալանա, սալանա դիւր բիր գազինդի,  
 Աջաբ մանա եախն գալլսան բայի  
 Ալ դալամն դարդմ բիրջա եազինդի  
 Դարդմա բիր գարման ալսան բարի:

Մամա լարն շամամ թաքի այ գեօղալ  
 Ղօյնընդիչի համամ թաքի այ գեօղալ  
 Բաղրլամիշ թամամ թաքի այ գեօղալ  
 Շօվլան մանա սարի սալըսան բարի:

Իւզն շօվլա վէրըր աթաշ նար քիմի  
 Ջամալն բայազդըր թագա դար քիմի,  
 Շանինեանցս մէհման գալսան եար քիմի  
 Գօղալ բիր եանմդայ դալսան բարի:



### Թ Է Ժ Ն Ի Ս

Վախտ օլուր աջընան գիւնուժ իլ չաքեար  
 Վախտ օլուր տօիւրսան բօլ օլուր գիւնուլ  
 Վախտ օլուր թափըլմազ ալընդազ գաթար  
 Վախտ օլուր թօքիւլուր սէլ օլուր գիւնուլ:

Վախտ օլուր քի չալշմաքտան ուզուլուր  
 Վախտ օլուր քի եար իչար դուզուլուր  
 Վախտ օլուր շուշա թաքի ազըլըր  
 Վախտ օլուր բիր ինջա թէլօլուր գիւնուլ:

Վախտ օլուր օթուրուր ազըր էլ քիմի  
 Վախտ օլուր քեօթուր ջօշխուն սէլ քիմի  
 Վախտ օլուր աչըր դզլ գիւլ քիմի  
 Վախտ օլուր տաղըր չօլօլուր գիւնուլ:

Վախտ օլուր քի արի թաքի բալ չաքար,  
 Վախտ օլուր քի դուռ շավանիր լալ չաքեար  
 Շանինեանց բու դունիադան ալ չաքեար  
 Ուստունդա աղլիան էլ օլուր գեօնուլ:



Арм

2-49

**ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.**

*Վաճառում է «Գիր» և «Գուտտենբերգ» գրախանութներում:*

*Գումարով գնողներին 20% զեղչ:*

*Օտար տեղերից դիմել՝ Тифлисъ, Архивный пер. № 13. Баграту Шаинянцу.*

2013

14841

